յօժարին ունել և մեզ բանալի առանձին, մեծազօր Տէրութիւնն ոչ ինչ դժուարի »· առ որ պատասխանի արար Բդեշխն թէ՝ «Այդ խնդիր 'ի միջի ձերում է կարդադրելի· մեք ոչ կարեմք հրամայել թէ տուք »։ Լատինք խնդրեցին զի Բդեշխն հարկադրեսցէ զՀայս առնել պատասխանի նոցին խնդրանաց, և նոցա հարկ եղեւ ըստ հրամանի Փաշային ասել զայս օրինակ· « Սակս վիճելոյ մեզ 'ի Բարձրագոյն հրամանի ոչ տեսաք լոյս ինչ, բայց միայն հարցմանս այսմիկ պաշտօնեայ Լիֆէնտին է պատասխանատու, զոր ինչ որոշում ունի 'ի հրովարտակին՝ եթէ զայն գործադրեսցէ՝ մեք հնազանդիմք »։ Եւ Փաշայն իբրու չկամելով զանց առնել զխնդրանօք նոցին՝ « Ասաց Հայոց և Ցունաց, եթէ հնարաւոր ինչ իցէ իրաւախոհ լինիլ 'ի միջի ձերում, այն ձեզ է գիտելի, խօսեցարուք 'ի միջի ձերում »։

Ցայս բան Լատին Պատրիարքն խնդրեաց 'ի Փաշայէն հրաման տալ Հայոց խօսիլ ընդ նոսա, և նոքա ետուն պատասխանի օրինակ զայս· « Զմեզ Տէրութիւնն և ազգն ոչ երբէք կացուցեալ են գործադրիչ որոշման բարերար Արքային մերոյ, որպէս նորոգ վէճս յարուցանեմք 'ի վերայ Կայսերական հրամանաւ որոշեալ խնդրոց՝ Տէր կեանս պարգեւեսցէ· խնդիրս այս յատուկ պաշտօնեայ ունի՝ տուեալ որոշման գործադրութեան, և 'ի մասինս յայսմիկ ըստ որոշման, գործադրութեանն՝ բաց 'ի հնազանդութենէ ոչ այլ ինչ ունիմք ասել։ Զայս պատասխանի առեալ Լատինաց՝ յետս ընկրկեալ ասեն· անվայել է մեզ յետին լինել երկուց հպատակ ազգաց, և առանց բանալի ունելոյ, իբրեւ հետեւակ մնանել յեկեղեցին։ Ահա յայս վերջացեալ բանիցն իւրաքանչիւր ազգք դարձան 'ի վանս իւրեանց։ Իսկ յետոյ 'ի լրոյ տեղեկանայ Յովհաննէս Պատրիարք՝ եթէ Լատին Պատրիարքն բողոքէ առ Հիւպատոսն Գաղղիոյ առ 'ի չընդունիլ, և նա խնդրամատոյց լինի Փաշային և Աֆիֆ Պէյին գրել 'ի Կոստանդինուպոլիս երկուստէք տեղեկութիւնս մինչեւ վերստին եկեսցէ գիր· իսկ Աֆիֆ Պէյն զայս պատասխանի տուեալ է նոցա· թէ դուք ինքնին գրեցէք, 'ի ձեր կամս է ապաստան, ես ոչ գրեմ զոր խընդրէքդ· զի հրաման հրովարտակին կրկին վիճաբանութեան